## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Ուսանողները մեր հասարակության երիտասարդ քաղաքացիներն են՝ լի անսահման եռանդով ու առաջադեմ գաղափարներով, հավակնոտ ծրագրերով ու վեհ նկրտումներով, հույսերով ու երազանքներով: Մասնաճյուղը նրանց համար հնարավորություն է սովորելու և սոցիալական կյանքի համար:

Ուսանողական խորհրդի, Ուսանողական գիտական ընկերության և տարբեր կազմակերպությունների հետ ուսանողներն իրականացնում են մշակույ և սպորտային միջոցառումներ, մրցույթներ, նշանավոր մարդկանց հետ հանդիպումներ, գիտաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ, դասընթացներ, սեմինարներ, ինտելեկտուալ խաղեր, ցուցահանդեսներ և այլն:

Մեր ուսանողները և դասախոսները մասնակցում են ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող գիտաժողովների, մարզամշակութային ստուգատեսների և գրանցում են նշանակալի արդյունքներ:





## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՄՆ-ի Այովայի համալսարան
- «Armenian Volunteer Network» ԱՄՆ–ում տեղակայված կրթական միջազգային կազմակերպություն
- Ռուսաստանի պետական մասնագիտական-մանկավարժական համալսարան
- Ռուսաստանի Դաշնության Գժելի պետական համալսարան
- ՀՀ կենտրոնական բանկ և այլն


Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան, Ուսանողական 3

Հեռախոս՝ (+374 96) 98 76 54

Կայքէջ՝ www.ijevan.ysu.am

ysuib


# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ **ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

Ի՞ՆՉ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՄԵՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ



2024 թ. դիմորդներին

#ԱրիԵՊՀ

## ԵՊՀ ԻՋևԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԱՍԻՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ՀՀ կառավարության որոշմամբ հիմնադրվել է 1994 թ.: Իր գործունեության ընթացքում բուհը տվել է 7000-ից ավելի շրջանավարտ.շատերը հաջողությամբ աշխատում են հայագիտության, մշակույթի, հումանիտար, սոցիալ-տնտեսական և բնական գիտությունների ոլորտներում:



Կրթօջախում դասավանդում են բարձրակարգ դասախոսներ, այդ թվում՝ Երևանի պետական համալսարանից և ՀՀ առաջատար բուհերից հրավիրված գիտությունների դոկտորներ ու պրոֆեսորներ:

## ԻՆՉՈՒ՞ ԸՆՏՐԵԼ ՄԵԶ

- Որակյալ կրթական ծրագրեր
- Ուսանողակենտրոն կրթական միջավայր
- Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ուսուցում
- Բնակավայրից ոչ հեռու և մատչելի ուսուցում



**«ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՀԶՈՐ ԶԵՆՔՆ Է, ՈՐՈՎ ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՓՈԽԵԼ ԱՇԽԱՐՀԸ՝ ԱՅՆ ԴԱՐՁՆԵԼՈՎ ԱՎԵԼԻ ԼԱՎԸ»**

### Մեր առաքելությունը

Լինելով կրթական և գիտամշակութային հաստատություն՝ մասնաճյուղի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, առավելապես փոխանցումը և տարածումն է:

Իրականացնելով աշխատաշուկայում պահանջված բակալավրական ու մագիստրոսական մասնագիտությունների կրթական ծրագրեր, ստեղծելով ուսանողակենտրոն միջավայր, կիրառելով նողակենտրոն միջավայր, կիրառելով ուսուցման ժամանակակից եղանակներ և որակի ապահովման կառուցակարգեր՝ մասնաճյուղը նպաստում է տարածաշրջանը անհրաժեշտ մասնագետներով համալրելուն:





| ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ | ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2024-25 ուսփարի) | | |
|---|---|---|---|
| | ՄՐՑՈՒԹԱՅԻՆ | | ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ |
| ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | |
| Տարրական մանկավարժություն և մեթոդիկա | Հլգ (գ) | Մ (գ) կամ Օտլ (գ) | |
| Ռուսաց լեզու և գրականություն | Ռլ (գ) | Հլգ (գ) | |
| Պատմություն | Հպ (գ) | Հլգ (գ) | |
| Հայոց լեզու և գրականություն | Հլգ (գ) | Օտլ (գ) | |
| Անգլերեն լեզու և գրականություն | Անգլ (գ) | Հլգ (գ) | |
| Ֆրանսերեն լեզու և գրականություն | Հլգ (գ) | Ֆրլ (գ) կամ Անգլ (գ) | |
| Հոգեբանություն | Հլգ (գ) | Օտլ (գ) կամ Կ (գ) | |
| ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | |
| Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | Մ (գ) | Ֆ (գ) կամ Անգլ (գ) | Հլգ (գ)* |
| ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | |
| Ֆինանսներ (ըստ ոլորտի) | Մ (գ) | Հլգ (գ) կամ Օտլ (գ) | Օտլ (գ)* կամ Հլգ (գ)* |
| Զբոսաշրջություն | Հլգ (գ) | Օտլ (գ) կամ Մ (գ) | |
| ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | |
| Դիզայն | Գծն | Կոմպ. | Հլգ (գ)* |
| Դեկորատիվ-կիրառական արվեստ | Գծն | Կոմպ. | Հլգ (գ)* |

*Հաշվի է առնվում շրջանավարտի ավարտական փաստաթղթի ավարտական քննության կամ տարեկան գնահատականը:

**ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ ԶԵՂՉՄԱՆ ՃԿՈՒՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՏԵՍԱԿ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

### ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

- I փուլ՝ ապրիլի 15-մայիսի 10,
- II փուլ՝ հունիսի 26-հուլիսի 1,
- լրացուցիչ թափուր տեղերի մրցույթ՝ հուլիսի 19-26:

## ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

- Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա
- Գործարար վարչարարություն (կառավարում)

Մեր շրջանավարտները հնարավորություն ունեն ուսումը շարունակելու ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մագիստրատուրայում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի և ՀՀ այլ բուհերի մագիստրատուրաներում: